ԱԶԳԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ԿՈՆՖԵՐԱՆՍԻ XV ԿՈՆԳՐԵՍԻ ԹԵՄԱՏԻԿԱՅԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

(Հարցաթերթիկը նախապատրաստվել է նախագահող երկրի՝ Ռումինիայի սահմանադրական դատարանի կողմից)

Թեման - Սահմանադրական արդարադատություն գործառույթները եւ հարաբերություններն այլ պետական մարմինների հետ

ՀԱՐՑԵՐ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

I. Սահմանադրական դատարանի հարաբերությունները Պառլամենտի եւ կառավարության հետ

1. Պառլամենտի դերը (կամ կառավարության) սահմանադրական դատարանի դատավորների նշանակման գործում: Նշանակվելուց հետո կարո՞ղ են, արդյոք, դատավորի լիազորությունները դադարեցվել միեւնույն մարմնի կողմից: Որո՞նք են լիազորության դադարեցման հիմքերը

Պատասխան – Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի ինն անդամների նշանակման գործընթացին մասնակցում են պառլամենտը՝ ՀՀ Ազգային ժողովը եւ Հանրապետության Նախագահը: ՀՀ Սահմանադրության 83 հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ՀՀ Ազգային ժողովը նշանակում է սահմանադրական դատարանի հինգ անդամ: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ Ազգային ժողովը սահմանադրական դատարանի նախագահի պաշտոնը թափուր մնալուց հետո երեսնօրյա ժամկետում նշանակում է նաեւ սահմանադրական դատարանի նախագահին:

Ազգային ժողովն լիազորված է նաեւ օրենքով սահմանված դեպքերում ու կարգով սահմանադրական դատարանի եզրակացության հիման վրա

պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ դադարեցնել սահմանադրական դատարանի՝ իր նշանակած անդամի լիազորությունները։

Սահմանադրական դատարանի անդամի լիազորությունները դադարեցնելու հիմքերը սահմանված են «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 14 հոդվածի 3-րդ մասում։ Վերջինիս համաձայն՝ ՀՀ Ազգային ժողովը կարող է սահմանադրական դատարանի եզրակացության հիման վրա սահմանադրական դատարանի՝ իր կողմից նշանակված անդամի լիազորությունները դադարեցել, եթե նա՝

1) մեկ տարվա ընթացքում երեք օր անհարգելի պատճառով չի մասնակցել սահմանադրական դատարանի նիստերին.

2) ժամանակավոր անաշխատունակության կամ այլ հարգելի պատճառով վեց ամիս շարունակ ի վիճակի չի եղել կատարելու սահմանադրական դատարանի անդամի լիազորությունները.

3) խախտել է սահմանադրական դատարանի անդամին վերաբերող՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքով սահմանված անհամատեղելիության կանոնները.

4) նախապես կարծիք է հայտնել սահմանադրական դատարանում քննվելիք գործի վերաբերյալ կամ այլ գործողություններով կասկածի տակ է դրել իր անաչառությունը կամ տեղեկություններ է հայտնել դռնփակ խորհրդակցության ընթացքի մասին կամ այլ կերպ դրժել է սահմանադրական դատարանի անդամի իր երդումը.

5) նշանակումից հետո ձեռք է բերել այնպիսի ֆիզիկական արատ կամ հիվանդություն, որի հետեւանքով այլեւս ի վիճակի չէ կատարելու սահմանադրական դատարանի անդամի լիազորությունները։

2. Որքանո՞վ է սահմանադրական դատարանը ֆինանսապես անկախ իր բյուջեն ձեւավորելու եւ տնօրինելու հարցում

Պատասխան – «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքով ըստ էության ապահովված է սահմանադրական դատարանի անկախությունն իր բյուջեի ձեւավորման եւ տնօրինման հարցում։ Համաձայն այդ օրենքի 6-րդ հոդվածի՝ սահմանադրական դատարանի նախագահը սահմանադրական դատարանի կանոնակարգով սահմանված կարգով բյուջետային համակարգի մասին օրենքով

սահմանված ժամկետում սահմանադրական դատարանի ծախսերի նախահաշիվը (բյուջետային հայտ) ներկայացնում է կառավարություն՝ պետական բյուջեի նախագծում ընդգրկելու համար։ Սահմանադրական դատարանի բյուջետային հայտը կառավարության կողմից ընդունվելու դեպքում ընդգրկվում է պետական բյուջեի նախագծում, իսկ առարկության դեպքում պետական բյուջեի նախագծի հետ միասին ներկայացվում է Ազգային ժողով։ Սահմանադրական դատարանն ինքնուրույն է տնօրինում իր միջոցները։

Սահմանադրական դատարանի բնականոն գործունեության ապահովման համար չկանխատեսված ծախսերի ֆինանսավորման նպատակով նախատեսվում է նաեւ սահմանադրական դատարանի պահուստային ֆոնդ, որը ներկայացվում է բյուջեի առանձին տողով։

3. Հնարավո՞ր է, արդյոք, որ պառլամենտը փոփոխի սահմանադրական դատարանի կազմակերպման եւ գործունեության մասին օրենքը առանց սահմանադրական դատարանի հետ խորհրդակցելու

Պատասխան – Նախեւառաջ հարկ է նշել, որ ՀՀ Սահմանադրության 94 հոդվածի համաձայն՝ սահմանադրական դատարանի լիազորություններն ու **կազմավորման կարգը սահմանվում են Սահմանադրությամբ,** իսկ **գործունեության կարգը սահմանվում է Սահմանադրությամբ եւ սահմանադրական դատարանի մասին օրենքով**։

Հաշվի առնելով, որ սահմանադրական դատարանի կազմավորման կարգը սահմանվում է ոչ թե օրենքով, այլ Սահմանադրությամբ, իսկ Սահմանադրության փոփոխություններն ու լրացումներն ընդունվում են հանրաքվեով, ապա Ազգային ժողովն իրավասու չէ փոփոխելու ՀՀ սահմանադրական դատարանի կազմավորման կարգը։ Ինչ վերաբերում է սահմանադրական դատարանի գործունեության կարգը փոփոխելուն, ապա քանի որ այդ կարգը սահմանվում է ոչ միայն Սահմանադրությամբ, այլ նաեւ օրենքով, ապա այնքանով, որքանով այդ կարգը սահմանված է «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքով, Ազգային ժողովը կարող է փոփոխել սահմանադրական դատարանի գործունեության կարգը։ Ինչ վերաբերում է այդ փոփոխությունները սահմանադրական դատարանի հետ խորհրդակցությունների արդյունքում կատարելուն, ապա Ազգային ժողովն այդ

փոփոխություններն ազատ է կատարելու առանց սահմանադրական դատարանի հետ խորհրդակցությունների:

Ավելին, սահմանադրական դատարանի հետ նման խորհրդակցություններն ըստ էության անթույլատրելի են՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ այդ փոփոխությունները, օրենքի նկատմամբ սահմանադրական վերահսկողության շրջանակներում, հետագայում կարող են սահմանադրական դատարանի քննության առարկա դառնալ:

4. Արդյո՞ք սահմանադրական դատարանն իրավասու է վերահսկողություն իրականացնելու պառլամենտի կանոնակարգի եւ, համապատասխանաբար, կառավարության կանոնակարգի վրա

Պատասխան – Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կանոնակարգն ունի օրենքի կարգավիճակ եւ հանդիսանում է կանոնակարգ օրենք: Քանի որ սահմանադրական դատարանն իրավասու է վերահսկողություն իրականացնելու օրենքների սահմանադրականության նկատմամբ, ապա Ազգային ժողովի կանոնակարգ օրենքը եւս սահմանադրական վերահսկողության օբյեկտ է: Օրինակ, ՀՀ սահմանադրական դատարանի 2009թ. հունիսի 6-ի ՍԴՈ-810 որոշմամբ «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասը ճանաչվել է ՀՀ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր:

Ինչ վերաբերում է հարցի՝ կառավարությանն առնչվող հատվածին, ապա Հայաստանի Հանրապետությունում կառավարության գործունեության կարգը սահմանվում է ՀՀ Նախագահի հրամանագրով (ՀՀ կառավարության եւ նրան ենթակա պետական կառավարման այլ մարմինների գործունեության կազմակերպման կարգը սահմանելու մասին ՀՀ Նախագահի 2007թ. հուլիսի 18-ի հրամանագիր): Հաշվի առնելով, որ ՀՀ Նախագահի հրամանագրերը սահմանադրական վերահսկողության օբյեկտ են՝ ապա կառավարության գործունեության կարգը սահմանող իրավական ակտը եւս ենթակա է վերահսկողության սահմանադրական դատարանի կողմից:

5. Սահմանադրական վերահսկողություն. նշել սահմանադրական վերահսկողության օբյեկտ հանդիսացող իրավական ակտերի տեսակները

Պատասխան – Սահմանադրական վերահսկողության ենթակա իրավական ակտերի շրջանակը սահմանված է ՀՀ Սահմանադրության 100 հոդվածով։ Վերջինիս համաձայն՝ սահմանադրական դատարանը որոշում է օրենքների, Ազգային ժողովի որոշումների, Հանրապետության Նախագահի հրամանագրերի, կառավարության, վարչապետի, տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների, միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների համապատասխանությունը Սահմանադրությանը։

6. ա) Պառլամենտը եւ կառավարությունը /եթե առնչություն ունի/ պետք է առանց ձգձգումների ձեռնամուխ լինեն սահմանադրական դատարանի որոշման հիման վրա օրենքը փոփոխելուն եւ Սահմանադրությանը համապատասխանեցնելուն։ Եթե այդպես է, ի՞նչ ժամկետ է սահմանված դրա համար։ Կա՞, արդյոք, հատուկ ընթացակարգ։ Եթե կան այլընտրանքներ, նշեք այդ մասին

Պատասխան - Այս հարցի պատասխանն ըստ էության տրված է ՀՀ սահմանադրական դատարանի 2010թ. փետրվարի 23-ի ՍԴՈ-866 որոշման մեջ։ Այդ որոշման 3-րդ կետում, մասնավորապես, ասված է. «… «Ազգային ժողովի կանոնակարգ», «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքներում դեռեւս նախատեսված չէ ՀՀ սահմանադրական դատարանի կողմից ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածի1-ին կետի հիմքով օրենքը (վերջինիս դրույթը), ՀՀ Ազգային ժողովի որոշումը Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչելու դեպքում ՀՀ Ազգային ժողովի կողմից սահմանադրական դատարանի այդպիսի որոշումից բխող անհրաժեշտ իրավակարգավորում, որպիսի հանգամանքը կարեւորվել է նաեւ ՀՀ սահմանադրական դատարանի որոշումների կատարման վիճակի ամփոփման վերաբերյալ 2008 եւ 2009 թվականների տարեկան հաղորդումներով»։

Միաժամանակ այս հարցի առնչությամբ հարկ է նշել, որ այն դեպքում, երբ սահմանադրական դատարանը, ՀՀ Սահմանադրության 102 հոդվածի 3-րդ մասի եւ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 15-րդ մասի հիման վրա հետաձգում է հակասահմանադրական ճանաչած նորմի իրավաբանական ուժը կորցնելու ժամկետը, դրանով սահմանադրական դատարանն ըստ էության սահմանում է որոշակի ժամկետ, որի ընթացքում օրենսդիրը պարտավոր է հակասահմանադրական ճանաչված իրավակարգավորումը համապատասխանեցնել

Սահմանադրության եւ սահմանադրական դատարանի որոշման պահանջներին: Եթե օրենսդիրը սահմանադրական դատարանում նշված ժամկետում չի կատարում իր այդ պարտավորությունը, այդ ժամկետը լրանալուն պես հակասահմանադրական ճանաչված նորմը կորցնում է իր իրավաբանական ուժը:

6. բ) Պառլամենտը կարո՞ղ է, արդյոք, անվավեր ճանաչել սահմանադրական դատարանի որոշումը: Նշել պայմանները

Պատասխան - Հայաստանի Հանրապետությունում ՀՀ Ազգային ժողովն օժտված չէ սահմանադրական դատարանի որոշումն անվավեր ճանաչելու իրավասությամբ:

7. Կա՞ն, արդյոք, ինստիտուցիոնալիզացված համագործակցության մեխանիզմներ սահմանադրական դատարանի եւ այլ մարմինների միջեւ: Եթե այո, ապա ի՞նչ բնույթ ունեն այդ շփումները, ի՞նչ գործառույթներ եւ լիազորություններ են վերապահված երկու կողմերին

Պատասխան – Նման ինստիտուցիոնալ մեխանիզմներ Հայաստանի Հանրապետությունում չեն գործում:

Թերեւս կարելի է նշել այն հանգամանքը, որ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 46 հոդվածի 5-րդ կետի համաձայն. «Հանրապետության Նախագահի, Ազգային ժողովի, կառավարության, վճռաբեկ դատարանի, մարդու իրավունքների պաշտպանի, գլխավոր դատախազի ներկայացուցիչները, որոնք ցանկանում են մասնակցել սահմանադրական դատարանի նիստին, կարող են դիմել սահմանադրական դատարան եւ նախապես ստանալ քննվող գործին առնչվող նյութերը, իսկ դատաքննության ընթացքում կարող են հրավիրյալների կարգավիճակով պարզաբանումներ տալ սահմանադրական դատարանի հարցերին»: Սա գործակցության յուրահատուկ ձեւ է՝ սահմանադրական դատավարության կանոնների շրջանակներում: Բացի դրանից, ՀՀ Ազգային ժողովում ստեղծվել է պատգամավորներից կազմված առանձին աշխատանքային խումբ, որը սահմանադրական դատարանի յուրաքանչյուր որոշումից հետո այն ուսումնասիրում եւ անհրաժեշտ օրենսդրական փոփոխությունների առաջարկներ է նախապատրաստում:

II.- Սահմանադրական վեճերի լուծումը սահմանադրական դատարանի կողմից

1. Սահմանադրական վեճերը (պետական մարմինների միջեւ սահմանադրական բնույթի իրավական վեճեր) ի՞նչ առանձնահատկություններ ունեն

Պատասխան - ՀՀ սահմանադրական դատարանը պետական մարմինների միջեւ սահմանադրական լիազորությունների վերաբերյալ իրավական վեճեր լուծելու իրավասություն չունի։

Սահմանադրական դատարանն անուղղակիորեն է անդրադառնում այդ հիմնախնդրին՝ նորմատիվ ակտերի սահմանադրականությունը որոշելու իր լիազորության շրջանակներում։

2. Արդյո՞ք սահմանադրական դատարանն իրավասու է քննության առնելու նման վեճեր

Պատասխան - Ի լրումն վերոնշյալի՝ սահմանադրական դատարանն իրավասու է քննության առնել միայն ընտրական հանձնաժողովների՝ ընտրությունների արդյունքում ընդունած որոշումների հետ կապված վեճերը։

3. Ո՞ր պետական մարմինները կարող են ներգրավվել այս վեճերում

Պատասխան - Նորմատիվ ակտերի սահմանադրականության հարցի որոշման շրջանակներում լուծման ենթակա սահմանադրական վեճը կարող է վերաբերել ցանկացած պետական մարմնի։

4. Նման վեճի առիթ կարող է հանդիսանալ իրավական ակտը, գործողությունը, թե՞ անգործությունը. դա վերաբերում է միայն իրավասությունների վերաբերյալ վեճերին, թե կարող է ներառել նաեւ այն դեպքերը, երբ մի պետական մարմինը վիճարկում է մեկ այլ մարմնի ընդունած ակտի սահմանադրականությունը։ Արդյո՞ք ձեր սահմանադրական դատարանը լուծել է նման վեճեր։ Նշել օրինակներ

Պատասխան - ՀՀ սահմանադրական դատարանում սահմանադրական վեճի քննարկման եւ լուծման առիթ կարող է հանդիսանալ միայն նորմատիվ ակտը, որի սահմանադրականությունը վիճարկվում է, եւ այդ վեճերը ներառում են միայն այն

դեպքերը, երբ մի պետական մարմին վիճարկում է մեկ այլ պետական մարմնի ընդունած ակտի սահմանադրականությունը։

5. Ո՞վ է իրավասու դիմել սահմանադրական դատարան նման վեճերի լուծման խնդրանքով

Պատասխան - Նման վեճերի լուծման խնդրանքով (այնքանով, որքանով վերաբերում է նորմատիվ ակտերի սահմանադրականությունը վիճարկելուն) սահմանադրական դատարան կարող են դիմել.

- Հանրապետության Նախագահը,
- ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների առնվազն մեկ հինգերորդը,
- կառավարությունը,
- տեղական ինքնակառավարման մարմինները՝ իրենց սահմանադրական իրավունքները խախտող պետական մարմինների՝ նորմատիվ ակտերի Սահմանադրությանը համապատասխանության հարցով,
- դատարանները եւ գլխավոր դատախազը՝ իրենց վարույթում գտնվող կոնկրետ գործին առնչվող նորմատիվ ակտերի դրույթների սահմանադրականության հարցերով,
- մարդու իրավունքների պաշտպանը՝ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետում թվարկված նորմատիվ ակտերի՝ Սահմանադրության 2-րդ գլխի դրույթներին համապատասխանության հարցերով,
- Հանրապետության Նախագահի եւ պատգամավորության թեկնածուները՝ Սահմանադրության 100-րդ հոդվածի 3.1-րդ եւ 4-րդ կետերի շրջանակներում իրենց առնչվող հարցերով։

6. Ի՞նչ ընթացակարգ է կիրառվում նման վեճերը լուծելիս

Պատասխան- Քանի որ նման վեճերը լուծվում են միայն նորմատիվ ակտի սահմանադրականության հարցը լուծելու շրջանակներում, ապա կիրառվում է նորմատիվ ակտերի սահմանադրականության հարցը որոշելու ընդհանուր ընթացակարգը։

7. Ի՞նչ հնարավորություններ ունի սահմանադրական դատարանը որոշում կայացնելիս։ Օրինակներ։

Պատասխան – Սահմանդրական դատարանը կարող է կայացնել հետեւյալ որոշումներից մեկը.

- վիճարկվող ակտը Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելու մասին.
- վիճարկվող ակտն ամբողջությամբ կամ մասամբ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչելու մասին։

Հարկ ենք համարում նշել, որ սահմանադրական դատարանն իր պրակտիկայում առանձին դեպքերում վիճարկվող նորմը ճանաչել է հակասահմանադրական՝ իրավակիրառական պրակտիկայում դրանց տրված մեկնաբանությամբ (որպես օրինակ տե՛ս 07.12.2009թ. ՍԴՈ-844, 02.12.2008թ. ՍԴՈ-782 որոշումները), ինչպես նաեւ վիճարկվող նորմը ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող՝ սահմանադրական դատարանի որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում (որպես օրինակ տե՛ս 13.10.2009թ. ՍԴՈ-833, 22.12.2009թ. ՍԴՈ-849, 19.01.2010թ. ՍԴՈ-852, 13.07.2010թ. ՍԴՈ-903 որոշումները)։

8. Սահմանադրական դատարանի որոշումների կատարման միջոցներն ու ձեւերը. պետական մամրմինների՝ որոշմանը հաջորդող գործողությունները։ Օրինակներ

Պատասխան – Սահմանադրական դատարանի որոշման հիման վրա հակասահմանադրական ճանաչված նորմատիվ ակտը կամ դրույթը կորցնում է իրավաբանական ուժը կամ անհարժեշտ փոփոխության ենթարկվում այն ընդունած մարմնի կողմից։

III.- Սահմանադրական դատարանի որոշումների կատարումը

1. Սահմանադրական դատարանի որոշումները.
ա) վերջնական են,
բ) ենթակա են բողոքարկման. եթե այո, նշել, թե որ սուբյեկտներն են իրավասու բողոքարկել այդ որոշումները,
գ) ունեն պարտադիր erga omnes բնույթ,
դ) պարտադիր են դատավարության կողմերի համար

Պատասխան - ՀՀ Սահմանդրության 102-րդ հոդվածի համաձայն՝ սահմանադրական դատարանի որոշումները վերջնական են: «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 65-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սահմանադրական դատարանի որոշումները դրանց ընդունման օրվանից հետո՝ եռօրյա ժամկետում, առաքվում են դատավարության կողմերին, պետական իշխանության համապատասխան մարմիններին, այդ թվում՝ ՀՀ Ազգային ժողով եւ ՀՀ վճռաբեկ դատարան, հրատարակվում են Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրում եւ սահմանադրական դատարանի տեղեկագրում: Իսկ նույն օրենքի 61-րդ հոդվածի 5-րդ մասի եւ 66-րդ հոդվածի համաձայն՝ սահմանադրական դատարանի՝ գործով ըստ էության ընդունված որոշումները պարտադիր են բոլոր պետական մարմինների եւ տեղական ինքնակառավարման մարմինների համար: Միաժամանակ, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ «Օրենքները պետք է համապատասխանեն Սահմանադրությանը եւ չպետք է հակասեն Հայաստանի Հանրապետության **սահմանադրական դատարան**ի որոշումներին»: Իսկ նույն օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն. «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի որոշումները չպետք է հակասեն Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, Հայաստանի Հանրապետության օրենքներին, Հայաստանի Հանրապետության **սահմանադրական դատարան**ի որոշումներին եւ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի վավերացրած միջազգային պայմանագրերին»:

Նույն օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն. «Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրերը չպետք է հակասեն Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանն ու Հայաստանի Հանրապետության օրենքներին, Հայաստանի Հանրապետության **սահմանադրական դատարան**ի որոշումներին, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի որոշումներին, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի վավերացրած միջազգային պայմանագրերին»:

Այսպիսով, ՀՀ սահմանադրական դատարանի որոշումները վերջնական են, բողոքարկման ենթակա չեն, չեն սահմանափակվում միայն դատավարության կողմերի համար ունեցած իրավական հետեւանքներով եւ, իրավական հետեւանքներ

առաջացնելով բոլորի եւ յուրաքանչյուրի համար, ունեն erga omnes պարտադիր բնույթ:

2. *Որոշումը պաշտոնական տեղեկագրում հրապարակելուց հետո, հակասահմանադրական ճանաչված իրավական ակտի տեքստը.*

ա) ուժը կորցնում է,

բ) կասեցվում է մինչեւ հակասահմանադրական ճանաչված ակտի՝ Սահմանադրությանը համապատասխանեցնելը,

գ) կասեցվում է մինչեւ օրենսդրի կողմից անվավեր է ճանաչվում սահմանադրական դատարանի որոշումը,

դ) այլ դեպքեր

Պատասխան - «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ սահմանադրական դատարանը վիճարկվող նորմատիվ ակտը կամ դրա դրույթը Սահմանադրությանը հակասող ճանաչելով միաժամանակ անվավեր է ճանաչում այդ ակտը կամ դրույթը, ինչը նշանակում է, որ սահմանադրական դատարանի կողմից Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչած նորմատիվ ակտը կամ դրա դրույթը սահմանադրական դատարանի որոշման հիման վրա կորցնում է իր իրավաբանական ուժը եւ այլեւս ենթակա չէ կիրառման:

Ընդհանուր կանոնի համաձայն սահմանադրական դատարանի կողմից հակասահմանադրական ճանաչված նորմատիվ ակտը կամ դրա մի մասը կորցնում է իր իրավաբանական ուժը սահմանադրական դատարանի որոշման ուժի մեջ մտնելու, այն է՝ հրապարակման պահից: Բացառություն են կազմում քրեական օրենսգրքի կամ վարչական պատասխանատվության վերաբերյալ օրենքի հակասահմանադրական ճանաչված դրույթները. այս դրույթներն իրենց իրավաբանական ուժը կորցնում են իրենց ուժի մեջ մտնելու պահից:

Միաժամանակ հարկ է նշել, որ ՀՀ Սահմանադրության 102 հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ սահմանադրական դատարանն իր որոշմամբ կարող է սահմանել Սահմանադրությանը չհամապատասխանող նորմատիվ ակտի կամ դրա մի մասի իրավական ուժը կորցնելու ավելի ուշ ժամկետ: Այս սահմանադրական նորմն իր իրացումն է ստացել «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 15-րդ մասում, որի համաձայն՝ եթե սահմանադրական դատարանը գտնում է, որ

վիճարկվող նորմատիվ իրավական ակտի կամ դրա որեւէ դրույթի՝ սահմանադրական դատարանի որոշման հրապարակման պահին Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչումն անխուսափելիորեն կառաջացնի այնպիսի ծանր հետեւանքներ հանրության եւ պետության համար, որոնք կխաթարեն այդ պահին տվյալ նորմատիվ ակտի վերացմամբ հաստատվելիք իրավական անվտանգությունը, ապա սահմանադրական դատարանը կարող է, տվյալ ակտը ճանաչելով Սահմանադրությանը հակասող, իր որոշման մեջ հետաձգել այդ ակտի իրավաբանական ուժը կորցնելը։

3. Այն դեպքում, երբ սահմանադրական դատարանը նորմի հակասահմանադրականության վերաբերյալ որոշում է կայացնում, ինչպես է այն պարտադիր դառնում ընդհանուր իրավասության դատարանների համար

Պատասխան – Ընդհանուր իրավասության դատարանների համար հակասահմանադրականության վերաբերյալ սահմանադրական դատարանի որոշումների պարտադիր բնույթը նշանակում է, որ.

- համաձայն ՀՀ քաղաքացիական դատավարության եւ քրեական դատավարության օրենսգրքերի համապատասխանաբար 3.3 բաժնի եւ 12.1 բաժնի՝ նորմատիվ ակտը կամ դրա դրույթը Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչելու մասին սահմանադրական դատարանի որոշումը հանդիսանում է նոր հանգամանք, որը հիմք է այն անձի առնչությամբ կայացված՝ ընդհանուր իրավասության դատարանի դատական ակտը վերանայելու համար, ում անհատական դիմումի հիման վրա սահմանադրական դատարանը Սահմանադրությանը հակասող եւ անվավեր է ճանաչել տվյալ նորմը։ Ավելին, համաձայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.31 հոդվածի եւ 426.2 հոդվածի՝ սահմանադրական դատարանի հակասահմանադրականության վերաբերյալ որոշման հիման վրա վերանայման են ենթակա նաեւ այն անձանց առնչությամբ կայացված՝ ընդհանուր իրավասության դատարանների ակտերը, ովքեր օրենքի դրույթի սահմանադրականության հարցի վերաբերյալ սահմանադրական դատարանի որոշման ընդունման օրվա դրությամբ ունեցել են սահմանադրական դատարան դիմելու իրավունքը "Սահմանադրական դատարանի մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին (ժամկետներին) համապատասխան

իրացնելու հնարավորություն (այս անձանց դատական ակտերի վերանայման հնարավորությունն օրենսդիրն ամրագրել է ի կատարումն սահմանադրական դատարանի 2009թ. հոկտեմբերի 13-ի ՍԴՈ-833 որոշման):

- Սահմանադրական դատարանի կողմից հակասահմանադրական եւ անվավեր ճանաչված նորմն այլեւս կիրառելի չէ ընդհանուր իրավասության դատարանների կողմից:

- Եթե սահմանադրական դատարանն այս կամ այն նորմը Սահմանադրությանը հակասող եւ անվավեր է ճանաչում «որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումների մասով» կամ այս կամ այն մասով, ապա սահմանադրական դատարանի նման որոշումների պարտադիր բնույթն ընդհանուր իրավասության դատարաններից պահանջում է այդ դրույթը կիրառել Սահմանադրությանը եւ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումներին համապատասխան:

4. Որպես կանոն սահմանված ժամկետներում օրենսդիրը կատարու՞մ է այն հակասահմանադրական դրսեւորումները վերացնելու իր սահմանադրական պարտավորությունը, որոնք արձանագրվել են նախնական կամ հետագա վերահսկողության արդյունքում

Պատասխան- Հաշվի առնելով, որ սահմանադրական դատարանի կողմից այս կամ նորմը Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչելու փաստը հանգեցնում է տվյալ նորմի իրավաբանական ուժի կորստին, եւ այդ նորմն այլեւս ենթակա չէ կիրառման՝ որպես կանոն, սահմանադրական դատարանի հակասահմանադրականության վերաբերյալ որոշումը օրենսդրից չի պահանջում հակասահմանադրականության վիճակը վերացնելու ուղղությամբ քայլեր ձեռնարկել: Սակայն, հաճախ հնարավոր են իրավիճակներ, երբ օրենսդրից պահանջվում է համապատասխան փոփոխություններ կատարել նորմատիվ ակտը Սահմանադրությանը համապատասխանեցնելու ուղղությամբ: Մասնավորապես, օրենսդրի նման միջամտության անհրաժեշտություն առաջանում է, երբ սահմանադրական դատարանը վիճարկվող նորմը հակասահմանադրական է ճանաչում «որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակ-ներում» կամ այս կամ այն մասով:

Օրենսդրի միջամտությունն անհրաժեշտ է նաեւ այն դեպքում, երբ սահմանադրական դատարանն իր որոշմամբ արձանագրում է օրենսդրական բաց։ Օրենսդրական բացի արձանագրումը չի կարող մնալ անհետեւանք։ Սահմանադրական դատարանի որոշումից պարտավորություն է ծագում՝ պատշաճ իրավական կարգավորմամբ լրացնել օրենքի բացը եւ վերացնել ոչ որակյալ իրավական կարգավորումը։

Օրենսդրի մոտ սահմանադրական դատարանի որոշման հիման վրա հակասահմանադրական ճանաչված իրավակարգավորումը Սահմանադրությանը եւ սահմանադրական դատարանի որոշմանը համապատասխանեցնելու պարտավորություն է ծագում է նաեւ այն դեպքում, երբ սահմանադրական դատարանն իր որոշմամբ որոշակի ժամկետով հետաձգում է հակասահմանադրական ճանաչած նորմի ուժը կորցնելը։ Օրենսդիրը պարտավոր է նշված ժամկետում փոփոխել եւ լրացնել համապատասխան օրենքը։

Ընդհանուր առմամբ օրենսդիրը պատշաճ կերպով արձագանքում է սահմանադրական դատարանի հակասահմանադրականության վերաբերյալ որոշումներին։ Սահմանադրական դատարանի որոշումները իրավունքի կարեւոր աղբյուր են դարձել։ Միայն վերջին 2.5 տարիների ընթացում ՀՀ Ազգային ժողովը ՀՀ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների հիման վրա 30-ից ավելի օրենքներում լրացումներ ու փոփոխություններ է կատարել։

5. Ի՞նչ իրավական հետեւանքներ են առաջանում, երբ օրենսդիրը թերանում է Սահմանադրությամբ կամ օրենսդրությամբ նշված ժամկետներում հակասահմանադրական դրսեւորումները վերացնելու իր պարտավորության մեջ։ Նշել օրինակներ

Պատասխան – Ինչպես արդեն նշվեց վերը, ՀՀ Սահմանադրությամբ կամ ընթացիկ օրենքներով սահմանված չեն ժամկետներ, որոնց շրջանակներում օրենսդիրը պարտավոր է շտկել հակասահմանադրական իրավակարգավորումը։ Նման ժամկետ անուղղակիորեն կարող է սահմանվել միայն սահմանադրական դատարանի որոշմամբ այն դեպքում, երբ սահմանադրական դատարանը հետաձգում է հակասահմանադրական ճանաչած նորմի ուժը կորցնելու ժամկետը։ Եթե նշված ժամկետում օրենսդիրը չի փոփոխում հակասահմանադրական ճանաչված իրավակարգավորումը, ապա նշված ժամկետի լրանալուն պես տվյալ նորմը կորցնում է իր

իրավաբանական ուժը։ ՀՀ սահմանադրական դատարանը վիճարկվող նորմի ուժը կորցնելու ժամկետը հետաձգել է իր 2008թ. հոկտեմբերի 8-ի ՍԴՈ-765, 2008թ. մայիսի 13-ի ՍԴՈ-753, 2008թ. նոյեմբերի 25-ի ՍԴՈ-780 եւ 2010թ. ապրիլի 13-ի ՍԴՈ-873 որոշումներով։

Օրենսդիրը սահմանադրական դատարանի ՍԴՈ-753 որոշման մեջ սահմանված ժամկետում համապատասխան փոփոխություններ ու լրացումներ չի կատարել «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» ՀՀ օրենքի վիճարկվող 53 հոդվածի 3-րդ մասում, ինչի արդյունքում այդ ժամկետը լրանալուն պես, այն է՝ 2008թ. դեկտեմբերի 1-ից հակասահմանադրական ճանաչված նորմն ուժը կորցրել է։

Մեկ այլ դեպքում՝ սահմանադրական դատարանի ՍԴՈ-780 որոշման առնչությամբ թեեւ օրենսդիրը սահմանված ժամկետում արձագանքել է սահմանադրական դատարանի որոշմանը եւ համապատասխան փոփոխություններ կատարել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում՝ փորձելով սահմանադրական դատարանի որոշմանը համապատասխան ապահովել վարչական արդարադատության երկաստիճան համակարգի արդյունավետությունը, այնուամենայնիվ, այդ փոփոխությունները ի զորու չէին լիարժեք իրացնել սահմանադրական դատարանի որոշման պահանջները։ Այդ մասին է վկայում այն փաստը, որ հետագայում մեկ այլ անհատական դիմումի հիման վրա սահմանադրական դատարանի քննության առարկա դարձան նաեւ Վարչական դատավարության օրենսգրքի՝ ի կատարումն սահմանադրական դատարանի նշված որոշման փոփոխված եւ լրացված դրույթները, որոնք սահմանադրական դատարանի կողմից իր 2010թ. ապրիլի 13-ի ՍԴՈ-873 որոշմամբ կրկին ճանաչվեցին ՀՀ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր՝ վարչական արդարադատության երկաստիճան համակարգի արդյունավետությունը չապահովելու հիմքով։

6. Արդյո՞ք թույլատրելի է օրենսդրին կրկին ընդունել օրենք, միեւնույն օրենսդրական լուծումը, որը ճանաչվել է հակասահմանադրական։ Նշել փաստարկները

Պատասխան- Ինչպես վերը նշվել է, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 61-րդ հոդվածի 5-րդ մասի եւ 66-րդ հոդվածի համաձայն սահմանադրական

դատարանի՝ գործով ըստ էության ընդունված որոշումները պարտադիր են բոլոր պետական մարմինների եւ տեղական ինքնակառավարման մարմինների համար։

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ օրենքները պետք է համապատասխանեն Սահմանադրությանը եւ չպետք է հակասեն Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի որոշումներին։

Հետեւաբար, օրենսդրին թույլատրված չէ կրկին ընդունել այն նորմը, որը սահմանադրական դատարանի կողմից ճանաչվել է Սահմանադրությանը հակասող եւ անվավեր։

7. Արդյո՞ք սահմանադրական դատարանը հնարավորություն ունի հանձնարարություններ տալու այլ պետական մարմինների իր որոշումների կատարման կապակցությամբ եւ/ կամ նախատեսելու, սահմանելու այն ձեւը, միջոցը, թե ինչպես կոնկրետ դեպքում պետք է կատարվի իր որոշումը

Պատասխան – Նման հնարավորություն ՀՀ սահմանադրական դատարանին ընձեռված չէ։